



## ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ

Ա.Մ. ՆԱՅԱՆՎՆԵՐՈՒ ԱՐԵՄՍԵԱՆ ԹԵՄԻ

**WESTERN PRELACY**

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

**H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE**

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: [Prelacy@aol.com](mailto:Prelacy@aol.com) Website: [www.westernprelacy.org](http://www.westernprelacy.org)



### **ՀԻՄՆԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԹԵՄԵՐՈՒ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԾՐԱԳԻՐՆԵՐՈՒ ՄՇԱԿՈՒՄ՝ 18ԷՆ 20 ՆՈՅԵՄԲԵՐԻ ԺՈՂՈՎՆԵՐՈՒՆ**

Թեմիս բարեխնամ Առաջնորդ Սրբազանը անցեալ շաբաթավերջին վերադարձաւ Լիբանանէն, ուր Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսարանին մէջ մասնակցած էր Ս. Աթոռոյս գահակալ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսին ու Ազգ. Կեդրոնական Վարչութեան հետ Ամերիկայի երեք թեմերու ժողովներուն, 18ԷՆ 20 Նոյեմբերին, ապա նաեւ մասնակից դարձած էր Կաթողիկոսութեան յարկին տակ տարուող այլ հանդիպումներու եւ աշխատանքներու:

Ժողովները տեղի ունեցած են գլխաւոր երկու գիծերու վրայ. առաջին հերթին, տեղի ունեցած են Կրօնական եւ Զաղաքական Ժողովներուն հետ իւրաքանչիւր թեմի Առաջնորդի ու վարչական ներկայացուցիչներու ժողովները, ապա տեղի ունեցած են համատեղ ժողովներ: Հանգամանօքէն քննարկուած են թեմական հարցեր, կաթողիկոսութեան հետ թեմերու գործակցութիւնն ու զայն ընդարձակելու միջոցները, առանց անտեսելու Ամերիկայի երեք թեմերուն միջեւ գործակցութեան զարգացման կարելիութիւնները: Այս բոլորին համար, մշակուած են աշխատանքի ծրագիրներ:

Կարեւորութեամբ քննարկուած են ծխական շրջաններու աշխուժացման եւ ընդարձակման միջոցները, երիտասարդութեան եւ ուսումնական հաստատութեանց կարիքները, հոգեւորականներու պատրաստութեան ու վերաորակաւորման միջոցները, քոյր եկեղեցիներու հետ յարաբերութեանց դաշտը ու զարգացման կարելիութիւնները, մեր ժողովուրդի կեանքին մէջ եկեղեցւոյ ընկերային ծառայութիւններու ընդարձակման միջոցներն ու մամուլին հետ գործակցութեան կանոնաւորումն ու ընդարձակումը:

### **PRELATE RETURNS FROM LEBANON**

H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, last week returned from Lebanon where he had participated in meetings at the Catholicosate, presided over by H.E. Catholicos Aram I. The meeting brought together the

Prelates, Central Executive members, and Executive Council members from the three North American Prelacies to discuss issues of mutual concern and strengthen collaboration.

Among the issues covered during the three day meetings was the revitalizing and expanding of parish communities, youth group activities, clergy preparation and training, and relations with sister churches.

A number of projects were drafted which will be implemented through collaborative efforts.

\*\*\*

## **ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆԸ ՊԻՏԻ ՀԱՆԴԻՍԱԳԵՏԷ Ս. ՍԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՑԻՈՅ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ**

Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Ս. Մուշեղ Արք. Մարտիրոսեան Կիրակի, 6 Դեկտեմբերին, պիտի հանդիսապետե Փասատինայի Ս. Սարգիս եկեղեցւոյ Ս. Պատարագին:

### **ԵՐԿՐԱՇԱՐԺԻ ԶՈՅԵՐՈՒ ՅԻՇԱՏԱԿԻՆ**

Երկուշաբթի, 7 Դեկտեմբերը, Հայաստանի աղետալի երկրաշարժի 21-րդ տարելիցն է: Այս առիթով, Թեմիս բոլոր եկեղեցիներուն մէջ, Կիրակի, 6 Դեկտեմբերին, Ս. Պատարագի ընթացքին, Տէր Ողորմիայի յատուկ արարողութիւն պիտի կատարուի ի յիշատակ զոհերուն:

Կը հրաւիրենք մեր ժողովուրդի զաւակները աղօթքով խոնարհելու երկրաշարժի զոհերուն յիշատակին առջեւ, խնդրելու Աստուծմէ, որ մեր Հայրենիքը նմանօրինակ աղետներէ հեռու պահէ եւ մեր ժողովուրդի զաւակներուն պարգեւէ խաղաղ ու ապահով կեանք:

## **PRAYER ON THE 21<sup>ST</sup> ANNIVERSARY OF THE ARMENIA EARTHQUAKE**

Monday, December 7<sup>th</sup> is the 21<sup>st</sup> anniversary of the Armenia earthquake. Thus, on Sunday, December 6<sup>th</sup>, prayers will be offered in all Prelacy Churches in memory of the victims.

H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, will preside over Divine Liturgy and the special prayer at St. Sarkis Church in Pasadena.

\*\*\*

## **ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆԸ ԵՒ ԱԶԳ. ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԱՆԴԱՄՆԵՐ ՆԵՐԿԱՅ ՊԻՏԻ ԸԼԼԱՆ Հ.Յ.ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՕՐՈՒԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԵԱՆ**

Կիրակի, 6 Դեկտեմբերին, երեկոյեան ժամը 6-ին, տեղի պիտի ունենայ Յ.Յ.Դ. Օրուան Տօնակատարութիւնը, Glendale High School-ի հանդիսասրահին մէջ:

Առաջնորդ Սրբազան Զայրը ներկայ պիտի ըլլայ տօնակատարութեան: Սրբազանին պիտի ընկերանայ Գերպ. Տ. Միւռն Ծ. Վրդ. Ազնիկեան: Ներկայ պիտի ըլլան Ազգային Վարչութեան անդաներ՝ Դոկտ. Կարօ Յակոբեան, Տիար Ներսէս Մելքոնեան, Տոքթ. Նաւասարդ Գազազեան եւ Տիար Խաչիկ Երեցեան:

## **PRELATE TO ATTEND ARF DAY CELEBRATION**

On Sunday, December 6<sup>th</sup>, 2009, the 119<sup>th</sup> anniversary of the ARF will be celebrated at the Glendale High School auditorium.

The Prelate will attend, accompanied by Very Rev. Fr. Muron Aznikian. Executive Council members Dr. Garo Agopian, Mr. Nerses Melkonian, Dr. Navasart Kazazian, and Mr. Khatchig Yeretizian will also attend.

\*\*\*

## **ՅԵՆՐԻԿ ԱՆԱՍԵԱՆԻ ԵՒ «ՍԻՓԱՆ» ԵՐԳՉԱԽՈՒՄԲԻՆ Ի ՊԱՏԻ ԶԵՆՆԱՐԿԻՆ**

Լոս Անճելըսի «Սիփան» երգչախումբի հիմնադիր եւ բազմաժանր խմբավար Յենրիկ Անասեանի ստեղծագործական, կատարողական գործունեութեան 50-ամեակը, ինչպէս նաեւ երգչախումբի հիմնադրութեան 30-ամեակի տօնակատարութիւնը տեղի պիտի ունենայ Կիրակի, 6 Դեկտեմբերին, երեկոյեան ժամը 6-ին, Զոլիվուտի «Տաղլեան» սրահին մէջ:

Յանուն Առաջնորդ Սրբազան Զօր, Ազգային Առաջնորդարանի Զրիստոնեական Դաստիարակութեան բաժանմունքի վարիչներէն՝ Զոզ. Տ. Պարթեւ Վրդ. Կիւլիմեան ներկայ պիտի ըլլայ ձեռնարկին:

## **HONORING HENRIK ANASYAN AND THE SIPAN CHOIR**

On Sunday, December 6<sup>th</sup>, 2009, a celebration in honor of Los Angeles "Sipan" Choir founder and maestro Henrik Anasyan's 50 years of service and the 30<sup>th</sup> anniversary of the choir will take place at Taglyan Cultural Complex in Hollywood.

Very Rev. Fr. Barthev Gulumian will represent the Prelate at the event.

\*\*\*

## **ԴԱԹԵԱՆ-ՄԱՐԻԱՄԵԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՆ ՄԵԾԱՐԱՆՔԻ ՏԱՐԵԿԱՆ ՁԵՌՆԱՐԿ**

Երկուշաբթի, 7 Դեկտեմբերի երեկոյեան, կազմակերպութեամբ Դաւթեան-Մարիամեան Կրթական Հաստատութեան, տեղի պիտի ունենայ Հաստատութեան տարեկան ճաշկերոյթը, Brandview Collection սրահին մէջ, Կլենտլլ:

Սոյն ձեռնարկին, կը գնահատուին ու կը մեծարուին կրթական կազմի վաստակաշատ նուիրեալներ, ինչպէս նաեւ գաղութիս մէջ բեղուն գործունեութիւն ունեցող հաստատութիւններ, սոյն Հաստատութեան կրթական գործը նիւթապէս ու բարոյապէս հովանաւորող անհատներ ու կազմակերպութիւններ:

Այս տարի, Տիար Լերի Չարեան, իբրեւ «Տարուան Գործունեայ Մարդը» յատուկ գնահատանքի պիտի արժանանայ, իր հանրային բազմամեայ վաստակին համար: Գնահատանքի պիտի արժանանայ նաեւ ԵՈՒ. ԷՍ. Սի. Համալսարանի Հայ Շրջանաւարտներու Միութիւնը, իբրեւ «Տարուան Ազգանուէր Հաստատութիւնը»:

Յանուն Առաջնորդ Սրբազան Հօր, Գերպ. Տ. Միւռն Տ. Վրդ. Ազնիկեան ներկայ պիտի ըլլայ ձեռնարկին եւ պիտի փոխանցէ Առաջնորդ Սրբազանին օրհնութեան եւ գնահատանքի խօսքը: Հայր Միւռնին պիտի ընկերանայ Կլենտլլի Ս. Աստուածածին եկեղեցւոյ հոգեւոր հովիւներէն՝ Արժ. Տ. Կոմիտաս Քիւնյ. Թորոսեան:

## **DAVIDIAN AND MARIAMIAN EDUCATIONAL FOUNDATION APPRECIATION NIGHT**

Davidian and Mariamian Educational Foundation has organized an appreciation night to will take place on the evening of Monday, December 7<sup>th</sup>, 2009, at Brandview Collection in Glendale.

Each year, educators and community supporters are honored for their contributions to the field of education and to the Foundation. This year's honorees are Larry Zarian as "Man of the Year" and the U.S.C. Armenian Alumni Association as "Organization of the Year".

Very Rev. Fr. Muron Aznikian will attend and convey the Prelate's blessings and well wishes. Rev. Fr. Gomidas Torossian will accompany Fr. Muron.

\*\*\*

**ՆՇԱՆԱԿՈՒՄ՝ ԱՐԵՒՍՏԵԱՆ ԹԵՄԻ ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐՈՒ  
ԽՆԱՄԱԿԱԼ ՄԱՐՄԻՆԻ ՆՈՐ ԿԱԶՄԻՆ**

Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Ս. Մուշեղ Արք. Մարտիրոսեան եւ Ազգային Վարչութիւնը կը հաղորդեն, թէ Ազգ. Վարչութիւնը, իր Երեքշաբթի, 1 Դեկտեմբերի նիստին, նշանակեց Թեմիս Ազգային Վարժարաններու Խնամակալ Մարմինի նոր կազմը, որ կը բաղկանայ հետեւեալներէն.-

Տեարք Մարք Կետիկեան  
Տիար Զրիս Զեօտեան  
Տիկին Սօսի Յովսէփեան  
Տիկին Լիզա Կապուտեան  
Տիկին Մակի Սարգունի  
Տիկին Վերժին Ճարագեան  
Տիկին Զուրի Ասլանեան-Քեօրօղլեան  
Օրիորդ Շարլոթ Սասունեան  
Օրիորդ Ժանին Թօփալեան:

Յաջողութիւն ու բարի երթ նորակազմ Խնամակալ Մարմինին:

## **NEW BOARD OF REGENTS APPOINTMENTS**

H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, and the Executive Council of the Western Prelacy hereby announce the new Board of Regent appointments.

The newly appointed Board of Regents consists of the following members:

Mr. Mark Guedikian  
Mr. Chris Keosian  
Mrs. Sossi Hovsepian  
Mrs. Liza Gaboudian  
Mrs. Maggie Sarkuni  
Mrs. Vergine Jarakian  
Mrs. Hourı Aslanian-Keuroghlian  
Ms. Charlotte Sassounian  
Ms. Jeannine Topalian

We wish the new Board success in their endeavors.

\*\*\*

**ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ ԱԶԳԱՅԻՆ  
ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ ԿՈՐԱՆՑՈՒՅ ԻՐ ԱՆԴԱՄՆԵՐԷՆ  
ՏԱՐՕՆ ԱՒԵՏԻՍԵԱՆԸ**

Անցեալ շաբաթավերջին, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը կորսնցուց Ազգային Կեդրոնական Վարչութեան Զաղաքական Ժողովին երիտասարդ անդամներէն, եւ երկար տարիներ Սուրիոյ հայութեան ու Բերիոյ Թեմի ազգային կեանքին մէջ կարեւոր պատասխանատուութիւններ ստանձնած Տարօն Աւետիսեանը:

Այս տխուր առիթով, Թեմիս բարեջան Առաջնորդ Սրբազան Զայրը, յանուն Կրօնական Ժողովին ու Ազգային Վարչութեան, ցաւակցական գիրեր յղեց Մեծի Տանն Կիլիկիոյ Ս. Աթոռի Գահակալ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսին, Բերիոյ Թեմի Առաջնորդ Գերշ. Տ. Շահան Եպս. Սարգիսեանին եւ ընտանեկան պարագաներուն:

## **PRELATE EXPRESSES CONDOLENCES ON THE LOSS OF DARON AVEDISSIAN**



Last week, the Catholicosate of Cilicia was left in mourning at the sudden passing of Central Executive member Mr. Daron Avedissian.

In addition to serving as a Central Executive member, Mr. Avedissian was Chairman of the Aleppo Diocese Executive Council and served the Armenian Church for decades in various other capacities.

On behalf of the Religious and Executive Councils, the Prelate sent a letter of condolence to H.H. Catholicos Aram I and H.G. Bishop Shahan Sarkissian, Prelate of the Aleppo Diocese and expressed his sympathies to the

decedent's family.

\*\*\*